



Ներգաղթի հետ կապված անարդար շահագործման գործունեության գծով հատուկ

ԱՄՆ արդարադատության վարչություն Քաղաքացիական իրավունքների բաժանմունք

Փախստականներ և ապաստարան ստացածներ. Ինչ պետք է իմանալ Ձև I-9-ի վերաբերյալ

Միացյալ Նահանգներում աշխատելու համար պետք է լրացնել <<Ձև I-9>> կառավարության ձևաթղթիկը, որն օգտագործվում է հավաստիանալու, որ Դուք իրավասու եք աշխատելու: **Գործատուները, որոնք չեն հետևում կանոններին, կարող են խտրականություն կիրառել Ձեր նկատմամբ:**

Դուք պետք է ձեր մասին տեղեկություն տրամադրեք I-9-ի Բաժին 1-ի համար:

- Փախստականները և ապաստարան ստացածները համարվում են <<աշխատելու համար իրավասու օտարերկրացիներ>>: Քանի որ Դուք ունեք աշխատանքի մշտական իրավունք, ապա աշխատանքի իրավասության ժամկետի լրացման ամսաթվի բացատում պետք է գրել <<N/A>> (<<Կիրառելի չէ>>):
- Եթե Դուք որոշեք օտարերկրյա քաղաքացու գրանցման համարի փոխարեն տրամադրել I-94 ընդունելության համարը՝ անձնագիր ունենալու դեպքում տրամադրեք ձեր անձնագրի տվյալները: Եթե Դուք անձնագիր չունեք՝ Ձեր անձնագրի տվյալների բացատում գրեք <<N/A>>:
- Եթե Ձեր I-94 քարտը պարունակում է ձեռագիր համար և ջնջված նախատպած համար, ապա ձեռագիր համարը ձեր I-94 համարն է:

I-9-ի Բաժին 2-ի համար Դուք պետք է ձեր գործատուին ներկայացնեք փաստաթղթեր, որոնք հավաստում են ձեր ինքնությունը և աշխատանքի իրավասությունը:

- I-9-ը ունի ընդունելի փաստաթղթերի երեք ցուցակ. Ա ցուցակ (ինքնությունը և աշխատանքի իրավասությունը համադրող փաստաթղթեր), Բ (ինքնության փաստաթղթեր) և Գ (աշխատանքի իրավասության փաստաթղթեր): Դուք պետք է ցույց տաք ԿԱՄ Ա ցուցակից մեկ փաստաթղթի, ԿԱՄ Բ և Գ ցուցակներից մեկական փաստաթղթի համադրության Ձեր ընտրությունը:
- Ձեր գործատուն չի կարող ձեզանից պահանջել աշխատանքի իրավասության փաստաթուղթ, եթե դուք ունեք պետական ինքնության և անսահմանափակ սոցիալական ապահովության քարտ:
- Եթե Դուք փախստական եք, ապա Ձեր I-94-ը Ա ցուցակի փաստաթուղթ է, որը վավեր է ձեր աշխատանքի ընդունելուց 90 օրվա ընթացքում: 90 օրից հետո դուք պետք է ցույց տաք Ա ցուցակի այլ փաստաթուղթ կամ Բ և Գ ցուցակներից մեկական փաստաթղթի համադրություն:
- Եթե դուք ապաստարան ստացած եք՝ դուք կարող եք Ձեր I-94 փաստաթուղթն օգտագործել որպես Գ ցուցակի փաստաթուղթ:

Գործատուն կարող է նորից փաստաթղթեր խնդրել միայն սահմանափակ հանգամանքների դեպքում:

- Եթե Դուք Բաժին 2-ի համար ցույց եք տվել Ձեր աշխատանքի իրավասության փաստաթուղթը, ապա աշխատանքի իրավասության փաստաթղթի ժամկետը լրանալու դեպքում ձեր գործատուն ձեզանից կխնդրի այլ փաստաթուղթ: Այս դեպքում Դուք կարող եք ըստ Ձեր ընտրության ցույց տալ ԿԱՄ Ա ցուցակի չսպասված փաստաթուղթ, ԿԱՄ Գ Ցուցակի փաստաթուղթ՝ ինչպիսին է Սոցիալական ապահովության քարտը: Դուք պարտավորված չեք նորից աշխատանքի իրավասության փաստաթուղթ ցույց տալ:
- Եթե Դուք Բաժին 2-ի համար ցույց եք տվել Բ և Գ ցուցակների փաստաթղթեր՝ ինչպիսիք են ինքնության քարտը և անսահմանափակ սոցիալական ապահովության քարտը, ապա Ձեր գործատուն չպետք է նորից խնդրի, որ Դուք ցույց տաք ձեր փաստաթղթերը, եթե նույնիսկ Ձեր աշխատանքի իրավասության փաստաթղթի ժամկետը լրացել է:

Աշխատանքը սկսելու համար Ձեզ պետք չէ Ձեր սոցիալական ապահովության համարը:

- Գործատուն պետք է Ձեզ թույլ տա աշխատել և վճարել նույնիսկ, եթե Դուք դեռևս չունեք ձեր սոցիալական ապահովության համարը:
- Եթե աշխատանքը սկսելու պահին Դուք չունեք Ձեր համարը՝ Բաժին 1-ի սոցիալական ապահովության համարի վանդակը դատարկ թողեք: Մա ճիշտ է նույնիսկ, եթե Ձեր գործատուն օգտագործում է E-Verify համակարգը:

**Եթե Դուք լրացուցիչ հարցեր ունեք I-9-ի և խտրականության վերաբերյալ՝
 գանգահարեք մեր անվճար 1-800-255-7688 թեժ գծին, կամ այցելեք
www.justice.gov/crt/about/osc: Կան օտար լեզվի թարգմանիչներ:**

Ներգաղթի հետ կապված անարդար շահագործման գործունեության գծով հատուկ խորհրդի գրասենյակ
 Անվճար թեժ գիծ. 1-800-255-7688 (Երկուշաբթի-Ուրբաթ, 9:00-17:00 ET) Կան թարգմանիչներ

<http://www.justice.gov/crt/about/osc/>